

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻՐԳԻ ԳԱՏԱՐԻԱ. «ԵՆՆԵԼՈՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ՝ ՊԵՏՔ Ե ԳՏՆԵՆՔ ԱՐԱԳ ԵԼՔ. ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼԵՆՏՐԱՆՔ ԶՈՒՆԻ»

Նոյեմբերի 12-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը, որտեղ քննարկվեց հոկտեմբերի 31-ի խորհրդարանական ընտրություններից հետո երկրում ստեղծված իրավիճակը:

Գիորգի Գախարիայի հայտարարությամբ, ելնելով քաղաքական իրավիճակից՝ պետք է գտնել արագ ելք, որը Վրաստանի քաղաքացիների, բնակչության պահանջն է: Նա վստահություն հայտնեց, որ քաղաքական ոլորտը լիովին գիտակցում է դա: Բացի այդ, Գախարիայի խոսքով, ապակառուցողական քայլերը չեն ունենա քաղաքացիների աջակցությունը:

- Այսօր անենակարելորդն ու առաջնայինը ոչ թե քաղաքական գործընթացի գնահատումն է, այլ այս քաղաքական իրավիճակից արագ ելք գտնելու քաղաքացիների ու բնակչության պահանջը: Վստահ եմ, քաղաքական ոլորտը լիովին գիտակցում է դա: Քաջ գիտակցում եմ նաեւ, որ այսօր տեղի ունեցող որոշ ապակառուցողական քայլեր եւ գործողություններ չեն ունենա քաղաքացիների աջակցությունը: Դա



Ակնհայտ դարձավ հոկտեմբերի 31-ին, երբ Վրաստանի քաղաքացին քաղաքական 9 կուսակցությունների համար քվեարկեցին (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ԱՐՑԱԽՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԵՑ ԶՐԱԴԱԴԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՂԻԲԵՋԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 10-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը համդես եկան արցախա-ադրբեջանական ռազմական դիմակայության դադարեցման, դիմակայության գոտում ռազմական գործողությունների դադարեցման հայտարարությամբ:

Ստորեւ ներկայացնում ենք երեք երկրների դեկավարների հայտարարությունը:

«Մենք՝ Ադրբեջանի Հանրապետության նախագահ Ի.Յ.Ալիևը, Հայաստանի Հանրապետության վարչապետ Ն.Վ.Փաշինյանը եւ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Վ.Պուտինը, հայտարարել ենք հետեւյալի մասին:

1. Հայտարարվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում կրակի եւ բոլոր ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին 2020 թվականի նոյեմբերի 10-ին Մոսկվայի ժամանակով 00:00-ից: Ադրբեջանի Հանրապետությունը եւ Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր, կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերի վրա:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԳԻՐԳԻ ԳԱՏԱՐԻԱՅԻ ԵՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԵՌԱՆՈՍԱԶՐՈՒՅՑԸ

Նոյեմբերի 11-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հեռախոսազրույց է ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

Վրաստանի կառավարության աշխատակազմի մամուլի ծառայության տեղեկատվությամբ, կողմերը քննարկեցին Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ գոյություն ունեցող իրավիճակը, նշեցին լիակատար զինադադարի մասին ձեռք բերված համաձայնության կարելիությունը եւ հույս հայտնեցին, որ նրա վավերացման գործընթացում կպահպանվի դրական դիմամիկա:



Վրաստանի եւ Հայաստանի վարչապետերը ընդգծեցին Հարավային Կովկասում հակամարտության խաղաղ ճանապարհով կարգավորման կարելիությունը ի նպաստ տարածաշրջանի երկրների կայունության ու զարգացման:

ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԿՈՎԿԱՍՈՒՄ ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ ԵՍ ԿՍԿՈՒՄ»

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, արձագանքելով արցախա-ադրբեջանական հակամարտության դադարեցման մասին հայտարարությանը, իր Twitter-ի էջում գրել է.

«Կովկասում նոր դարաշրջան է սկսվում, շնորհավորում եմ մեր բարեկամներ հայերին ու ադրբեջանցիներին ողբերգական պատերազմի ավարտի կապակցությամբ: Շնորհակալություն եմ հատնում ֆասիլիտատորներին: Ցավակցում եմ գոհվածների ընտանիքներին: Խաղաղությունն ու կայունությունն այլընտրանք չունեն: Միասին համագործակցության նոր փուլ ենք մտնում», - գրում է Վրաստանի նախագահը:



(Թեմայի շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԱՅՔ ՊՈՄՊԵՈՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑՈՎ ԿԺԱՄԱՆԻ ՎՐԱՍՏԱՆ

Նոյեմբերի 17-ին երկօրյա պաշտոնական այցով Թբիլիսի կժամանի Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղար Մայք Պոմպեոն: Այդ մասին պաշտոնական տեղեկատվություն է տարածել ԱՄՆ պետքարտուղարությունը:

Ինչպես նշված է գերատեսչության կայքում տեղադրված հայտարարության մեջ, ԱՄՆ պետքարտուղարը նոյեմբերի 13-23-ը կմեկնի Ֆրանսիա, Թուրքիա, Վրաստան, Իսրայել, Արաբական Միացյալ Էմիրություններ, Քաթար եւ Սաուդյան Արաբիա:

Պետքարտուղարության հաղորդմամբ, Մայք Պոմպեոն Թբիլիսիում հանդիպելու է Վրաստանի



նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու, վարչապետ Գիորգի Գախարիայի եւ արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանու հետ, որպեսզի վե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

COVID - 19



ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԱՅՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐ

Վերջին մեկ ամսում Վրաստանում կորոնավիրուսի տարածման կտրուկ աճը, ինչպես նաեւ վարակից մահացության թվի ավելացումը լուրջ մտահոգություն են առաջացնում: Միջգերատեսչական համակարգող խորհուրդը հայտարարեց, որ լայնածավալ սահմանափակումներ ներդնելու մտադրություն չունի, թեպետ որպես կանխարգելիչ միջոց՝ ծրագրում է իրականացնել առանձին հատվածների կետային սահմանափակումներ:

մի շարք սահմանափակումներ: Մասնավորապես, վերոնշյալ քաղաքներում ժամը 22:00-ից 05:00-ն կարգվելի քաղաքացիների տեղաշարժը: Խոսքը

վերաբերում է ինչպես հետիոտն, այնպես էլ տրանսպորտային տեղաշարժին:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

Վրաստանի միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ, նոյեմբերի 9-ից երկրի մի շարք խոշոր քաղաքներում (Թբիլիսի, Զուլաբիսի, Բաթումի, Ռուսթավի, Չուգոդի, Գորի, Փոթի) կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով ուժի մեջ են մտել

(Թեմայի շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԱՅՔ ՊՈՍՊԵՈՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑՈՎ ԿԺԱՄԱՆԻ ՎՐԱՍՏԱՆ

(Ակիզը՝ 1-ին էջում)

րահաստատի ԱՄՆ-ի աջակցությունը Վրաստանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության նկատմամբ եւ կոչ կանի հետագա առաջընթաց ունենալ ժողովրդավարական բարեփոխումներում: Պետքարտուղարը կհանդիպի նաեւ Յանայն Վրաստանի Կաթողի-

կոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ:

Վրաստան այցի ընթացքում բարձրաստիճան հանդիպումների ժամանակ կքննարկվեն ԱՄՆ-Վրաստան ռազմավարական գործընկերության խարտիայով նախատեսված առաջնահերթ ուղղություններն ու երկու երկրների միջեւ գոյություն ունեցող հստակ համագործակցության հետագա խորացման հեռանկարները, ինչպես նաեւ տարածքային ամբողջականության եւ տնտեսության, ժողովրդավարության, ժողովուրդների միջեւ կապերի, կրթության եւ մշակույթի փոխանակման ոլորտում:

Այցի շրջանակներում կայանալիք հանդիպումներում, կողմերը կքննարկեն Վրաստանի եւ տարածաշրջանի անվտանգության միջավայրը, ինչպես նաեւ երկրների համագործակցությունը տարածաշրջանային ու միջազգային անվտանգության ամրապնդման ուղղությամբ: Կողմերը կքննարկեն նաեւ Վրաստանում ընթացող ժողովրդավարական եւ տնտեսական բարեփոխումների վերաբերող հարցեր:

Պաշտոնական թրիլիսին շնորհավորական ուղերձներ է հղել Ձո Բայդենին ԱՄՆ-ի 46-րդ նախագահ ընտրվելու կապակցությամբ: Վրաստանի նախագահ Սալոմե Չուրաբիշվիլին Ձո Բայդենին եւ փոխնախագահ Զամալա Յարիսին ուղղված ուղերձում նշել է.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹՐԻԼԻՍԻՆ ԸՆՈՐՀԱՎՈՐԵՅ ԶՈ ԲԱՅԴԵՆԻՆ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՆ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՈՒԹՅԱՄԲ

«Վրաստանին, Կովկասի տարածաշրջանին՝ աշխարհին անհրաժեշտ է ազատ, ուժեղ, ժողովրդավարական Ամերիկա: Յուս ունեմ՝ Ձեզ հետ համագործակցելու, որ մեր գործընկերությունն ու կապերը էլ ավելի ուժեղանան ու խորանան»:

«Վրաց ժողովրդի անուկից շնորհավորում եմ ընտրված նախագահ Ձո Բայդենին՝ Վրաստանի վաղեմի բարեկամին, եւ ընտրված փոխնախագահ Զամալա Յարիսին: Ակնկալում եմք ԱՄՆ-Վրաստան ռազմավարական գործընկերության հետագա ուժեղացմանը»:

ԱՄՆ-ի նոր նախագահ ընտրվելու կապակցությամբ Ձո Բայդենին շնորհավորել են նաեւ Վրաստանի ԱԳ նախարար Դավիթ Չալվալիանին եւ խորհրդարանի նախագահ Արչիլ Թալալվաձեն:

ԱՄՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է 132 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ

ԱՄՆ-ի Սենատի հատկացումների հանձնաժողովը հրապարակել է 2021 թվականի բյուջետային օրինագծերի փաթեթը: 12 փաստաթղթերի թվում է «Արտասահմանյան օպերացիաների ֆինանսավորման մասին» օրենքի նախագիծը, որը նախատեսում է Վրաստանին հատկացնել առնվազն 132 միլիոն դոլար:

Մասնավորապես, հատկացումների հանձնաժողովի կողմից հրապարակված նախագծի համաձայն, Վրաստանի համար նախատեսվում է առնվազն 132 025 000 ԱՄՆ դոլարի ֆինանսավորման հատկացում: Փաստաթղթում խոսվում է նաեւ Վրաստանի բռնազավթված տարածքների մասին: Ըստ օրինագծի, փաստաթղթով նախատեսված ֆինանսավորումը չի ստանա այն երկրի կենտրոնական կառավարությունը, որը, պետքարտուղարության զեկույցի համաձայն, ճանաչում է Ռուսաստանի կողմից բռնազավթված վրացական տարածքների, Աբխազիայի ու Ցխինվալիի տարածաշրջանների անկախությունը եւ/կամ այդ շրջանների հետ ունի դիվանագիտական հարաբերություններ: Փաստաթղթի համաձայն, պետքարտուղարը պետք է ժամանակին հրապարակի այդպի-

սի երկրների ցուցակը պետքարտուղարության կայքում: Բացի այդ, նշվում է, որ պետքարտուղարը կարող է հրաժարվել սույն կետով նախատեսված օգնությունը սահմանափակելուց, եթե դա բխում է Միացյալ Նահանգների շահերից: Նաեւ, այս օրինագծով տրամադրված ֆինանսավորումը չի կարող օգտագործվել Ռուսաստանի կողմից Աբխազիայի եւ Ցխինվալիի շրջանի բռնազավթմանն աջակցելու համար: Փաստաթղթի համաձայն, ֆինանսների նախարարը պետք է հանձնարարի յուրաքանչյուր միջազգային ֆինանսական հաստատության գործադիր տնօրենին օգտագործել իր ձայնը՝ հակառակվելու Վրաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը ոտնահարող ծրագրերին:

«Վրաստանն աջակցում է երկու կողմի միջեւ երկխոսությանը: Միաժամանակ մենք միջազգային հանրության հետ մեկտեղ պատրաստակամություն ենք հայտնում նպաստելու խաղա-

ղարար գործընթացի իրականացմանը: Վստահ ենք, որ միջազգային հանրության ակտիվ ներուժը եւ բազմակողմանի միջազգային մեխանիզմների ուժի մեջ մտնե-

լը արդյունք կտա երկարամյակ եւ խաղաղության հիմք դնելու համար, ինչը նոր հնարավորություններ կստեղծի ողջ տարածաշրջանի համար»,- նշված է հայտարարության մեջ:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳՆ. ԱԶԱԿՑՈՒՄ ԵՆՔ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի արտաքին գործերի նախարարության մամուլի ծառայությունը հայտարարություն է հրապարակել, որում ընդգծում է՝ «Վրաստանը հույս է հայտնում, որ Ադրբեջանի ու Հա-

յաստանի միջեւ ձեռք բերված համաձայնությունը՝ կապված կրակի դադարեցման հետ, կնպաստի հակամարտության լուծման լայնածավալ գործընթացին»:

«Վրաստանն աջակցում է երկու կողմի միջեւ երկխոսությանը: Միաժամանակ մենք միջազգային հանրության հետ մեկտեղ պատրաստակամություն ենք հայտնում նպաստելու խաղա-

ղարար գործընթացի իրականացմանը: Վստահ ենք, որ միջազգային հանրության ակտիվ ներուժը եւ բազմակողմանի միջազգային մեխանիզմների ուժի մեջ մտնե-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԱՐՑԱՆԱՎՈՐԵԶԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՊԱԿՈՒԹՅԱՄԲ

«ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԲԱՑՎԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՕՂԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ»



Վրաստանի վարչապետի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցերով հատուկ ներկայացուցիչ Ջուրաբ Աբաշիձեի հայտարարությամբ, Ադրբեջանի եւ Հայաստանի խնդրանքով, Վրաստանի օդային տարածքը որոշակի ժամանակահատվածով կօգտագործվի ռուսական զորամիավորումը Լեռնային Ղարաբաղ տեղափոխելու համար: Ինչպես գիտեք, վրացական կողմն արդեն արձագանքել է նույնների 10-ին Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հրադադարի մա-

սին համաձայնագրին: Հուսով ենք, որ դա կնպաստի հակամարտությունների կարգավորման լիարժեք գործընթացին: Իր հերթին, Վրաստանը նախկինում պատրաստակամություն էր հայտնել նպաստել խաղաղության գործընթացի իրականացմանը՝ միջազգային հանրության հետ միասին: Ինչ վերաբերում է Վրաստանի դերին ու մեր մասնակցությանը խաղաղապահ գործառնությանը խաղաղապահ գործառնությանը լուծելու հարցում, ապա այս գործընթացում որոշում կկայացվի՝ ըստ խաղաղության կազմածելի, իհարկե ելնելով նաեւ ազգային շահերից: Հաշվի առնելով այս փուլում խնդրի հրատապությունն ու խաղաղության հաստատման համար սահմանափակ ժամանակը՝ ինչպես Ադրբեջանի, այնպես էլ՝ Հայաստանի խնդրանքով, ես շեշտում եմ, որ ինչպես Ադրբեջանի, այն-

պես էլ՝ Հայաստանի խնդրանքով, որպես բացառություն, ռուսական խաղաղապահ գործառնության մի մասը, նախապես պայմանավորված ժամանակահատվածով կտեղափոխվի բախման գոտի՝ օդային տարածքի միջոցով, եւ այդ մասին մեր գործընկերները տեղեկացված են,- ասել է Ջուրաբ Աբաշիձեն: Ըստ Ջուրաբ Աբաշիձեի, խոսքը որոշակի ժամանակահատվածով օդային տարածքի բացման մասին է, որը կպահանջի զորակազմի տեղափոխում: Ըստ նրա, խոսքը կարճ ժամանակահատվածի մասին է: Սա որոշակի ժամանակահատված է: Մի քանի օրվա մասին է խոսքը, որն անհրաժեշտ կլինի այս գործառնությանը տեղափոխելու համար: Կարծում եմ, որ սա կարճ ժամանակահատված է,- հավելեց Ջուրաբ Աբաշիձեն:

«Վրաստանն աջակցում է երկու կողմի միջեւ երկխոսությանը: Միաժամանակ մենք միջազգային հանրության հետ մեկտեղ պատրաստակամություն ենք հայտնում նպաստելու խաղա-

ղարար գործընթացի իրականացմանը: Վստահ ենք, որ միջազգային հանրության ակտիվ ներուժը եւ բազմակողմանի միջազգային մեխանիզմների ուժի մեջ մտնե-

«ԲԱՐԵԲԱՆՏԱԲԱՐ, ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԼՐԻՎՈՒԹՅԱՄԲ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԶԻ ՄԱՏՆՎԵԼ»

Արձագանքելով Ռուսաստանի միջնորդությամբ արցախա-ադրբեջանական ռազմական դիմակայության դադարեցման մասին Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի ղեկավարների հայտարարությանը՝ վրաց հայտնի քաղաքագետ Կախա Գոգոլաշվիլին հայտարարեց, որ բարեխաղաղաբար, հայկական կողմը լրիվու-

թյամբ պարտության չի մատնվել: - Հայկական կողմը լրիվությամբ պարտության չի մատնվել եւ հրադադարի պայմաններով իր վերահսկողությունն է տարածում Ղարաբաղի տարածքի երեք քառորդի վրա: Ըստ այդ փաստաթղթի, Հայաստանը պահպանեց անմիջականորեն Ղարաբաղի հետ ճանապարհի՝ Լաչինի

5 կմ լայնությամբ գոտին, որը գտնվում է դաշնակից՝ Ռուսաստանի վերահսկողության տակ: Ադրբեջանն այդ երկրամասի նկատմամբ իր ինքնիշխանությունը չվերականգնեց, հետեւաբար, չնայած այդ անհաջողությանը, փաստորեն Հայաստանի համար ոչինչ չի փոխվել,- հայտարարեց քաղաքագետը:

Ելիսեյան պալատն իր հայտարարության մեջ նշել է նաեւ, որ Թուրքիան պետք է դադարեցնի իր սադրանքները տարածաշրջանում եւ զերծ մնա ցանկացած գործողությունից, որը կարող է վտանգել ապագա պայմանագիրը: * Եվրոպական Միության արտաքին գործերի եւ քաղա-

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՍԿՍՎՈՒՄ Ե ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ՎԱՐԿԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Ելնելով նոր կորոնավիրուսի համավարակի պատճառած իրավիճակից «Արտադրիչի Վրաստանում» գործակալությունը նույնների 13-ից հայտարարեց դիմումների չորրորդ հոսքի ընդունումը «Ընտանեկան, փոքր եւ միջին հյուրանոցային արդյունաբերության աջակցության համաֆինանսավորման մեխանիզմ» ծրագրի շրջանակներում: Հայտերն ընդունվելու են մինչև նույնների 22-ը ներառյալ:

Ծրագրի նպատակն է նպաստել Վրաստանի ընտանեկան, փոքր եւ միջին հյուրանոցների ֆինանսական բեռի թեթևացմանը կոմերցիոն բանկերի առջև ու շարունակել դրանց գործունեությունը շուկայում:

Այս մեխանիզմի շրջանակներում «Արտադրիչի Վրաստանում» գործակալությունը համաֆինանսավորելու է ձեռներեցներին վարկերի հաշվարկված տարեկան տոկոսագումարները, որոնք հաշվարկվում են 2020 թվականի մարտի 1-ի դրությամբ, նրա վարկի մնացորդի վրա առաջիկա 12 ամիսների ընթացքում հաշվեգրված տոկոսներին համապատասխան:

Ձեռնարկատեր սուբյեկտը հնարավորություն ունի ստանալու համաֆինանսավորման գումարի կեսը այն վարկի համար, որի վրա գործակալությունն արդեն իրականացրել է այս ծրագրի շրջանակներում վեց օրացուցային ամսվա ընթացքում հաշվեգրված տոկոսների տոկոսագումարի փոխանցում:

Գործակալության փոխանցմամբ, համաֆինանսավորման գումարը կարող է օգտագործվել ինչպես 2020 թվա-

կանի մարտի 1-ից վարկի հաշվեգրված տոկոսների վճարման, այնպես էլ մինչև 2020 թվականի մարտի 1-ը հաշվեգրված տոկոսները վճարելու համար:


«Ազգային արժույթով տրված վարկի դեպքում 80 (ութսուն) տոկոսից ոչ ավելի գումարի չափով:

Արտարժույթով տրված վարկի դեպքում (միայն դոլար, եվրո) 70 (յոթանասուն) տոկոսից ոչ ավելի:

Համաֆինանսավորման մեխանիզմի շրջանակներում վարկի առավելագույն չափն է 5 000 000 [արի՝ ազգային արժույթով տրված վարկի դեպքում, 1 750 000 դոլար՝ դոլարով վարկի դեպքում, 1 650 000 եվրո՝ եվրոյով տրված վարկի դեպքում:

Ձեռնարկատիրոջ վարկը պետք է տրվի կոմերցիոն բանկի կողմից մինչև 2020 թվականի մարտի 1-ը: Հյուրանոցը պետք է ներառի առնվազն չորս ֆունկցիոնալ սենյակ:

Ձեռնարկատիրոջ եւ կոմերցիոն բանկի միջև ստորագրված վարկային փաստաթղթի համաձայն, ընդհանուր վարկի գումարի առնվազն 80 տոկոսը պետք է տրամադրվի հյուրանոցի հա-



ՆՃՆԳՈՒՄ ՆՆՆԳՐՈՒՄԻՆՈՒՄ

մար անշարժ գույք գնելու/կառուցելու/ընդլայնելու/վերազինելու/վերակառուցելու/ձեռք բերելու նպատակով:

Ծրագրով սահմանված համաֆինանսավորումից չի կարողանա օգտվել այն ձեռնարկատերը, որի վարկը դասակարգվում է առեւտրային բանկի կողմից խնդրահարույց ժամանակահատվածում մինչև 2020 թվականի հունվարի 1-ը՝ կողմերի միջև կնքված համաձայնագրին եւ բանկի ներքին ընթացակարգերին համապատասխան:

Բացի այդ, ձեռնարկատերը չի կարողանա օգտվել համաֆինանսավորումից, եթե գործակալությունն այս ծրագրի շրջանակներում արդեն իրականացրել է տոկոսարդյույթով սուբսիդավորված գումարը, որը հաշվարկվել է 12 օրացուցային ամսվա ընթացքում»,- ասվում է գործակալության հայտարարության մեջ:

ՄԻՍՈՆ ԿԻԼԱԶԵ



ՎՐԱՍՏԱՆԵՐԱՆՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՆՆԵՐԻ

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, 2020 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին Վրաստանում առեւտրաշրջանառությունը (առանց հայտարարագրման առեւտրի) կազմել է 9 159,5 մլն դոլար, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից պակաս է 15,0 տոկոսով:

Վիճակագրության ազգային ծառայությունը տեղեկացնում է, այստեղից 2 715,3 մլն դոլարը (11,1 տոկոսով պակաս) արտահանումն էր, իսկ 6 444,2 դոլարը (16,6 տոկոսով պակաս)՝ ներմուծումը: Բացասական առեւտրային հաշվեկշիռը 2020 թվականի հունվար-հոկտեմբերի ամիսներին կազմել է 3 728,9 մլն դոլար եւ արտաքին առեւտրաշրջանառության 40,7 տոկոսը:

ՄԵՊԱԳՐԱՎԱՆ ԳՍՏԱՎՅԻՆ՝ ԳԻՐԳԻ ԵՆՁՄԱՆՎՈՐՈՒՄ ԳՈՐԾՈՎ ԳԵՐԵՎԱԿԱԼՈՒՄ ԱՆՁՍՏՆԱՆՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՆՆԵՐԻ

Նույնների 13-ին բավականին տեսական դեմոստրացիայի անցկացումից հետո, Սցիսթայի շրջանային դատարանում հայտարարվել է ֆուտբոլիստ Գիորգի Շաքարաշվիլի գործով ձեռքարկված անչափահասների գործով դատավճիռը:

Դատավորի որոշմամբ, անչափահասների նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ:

Ինչ վերաբերում է նրանց կոնկրետ պատիժներին, այս առնչությամբ եւս մեկ դատական նիստ կկայանա նույնների 20-ին:

Հիշեցնենք, որ Գիորգի Շաքարաշվիլի սպանությունը տեղի էր ունեցել ընթացիկ տարվա հունիսին, եւ դեպքը մեծ արձագանք էր առաջացրել հասակությունում:

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿՈՍՈՒՆԱԼ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԿԿԱԶՄԻ 1,2 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ ԳԱԶԻ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԻՑ ԿՕԳՏՎԻ 650 ՀԱԶԱՐ ԸՆՏԱՆԻՔ



Ինչպես արդեն հայտնի էր, հակաճգնաժամային միջոցառումների երրորդ փուլի շրջանակներում, նույնների 1-ից 4 ամսվա ընթացքում (նույններ, դեկտեմբեր, հունվար, փետրվար) Վրաստանի կառավարությունն իրականացնում է բնակչության որոշ խավերի կոմունալ վճարումների փոխհատուցման գործառնությունը:

խարհան, առաջիկա ամիսների ընթացքում կթեթևացնի քաղաքացիների հոգսը:

- Էլեկտրաէներգիայի վճարը կֆինանսավորվի մինչև 200կվտ սպառած ավելի քան 1.2 միլիոն ընտանիքի համար, կֆինանսավորվի նաեւ ջրի եւ աղբի ծառայությունները, գազի վճարը՝ մինչև 200 խորանարդ մետր, կվերաբերի 650 հազար ընտանիքի: Ցանկության դեպքում, քաղաքացիները հնարավորություն կունենան հրաժարվել օգնությունից: Գլոբալ ճգնաժամի ֆոնին առաջիկա ամիսներին թեթևացնում ենք մեր քաղաքացիների հոգսերը,- հայտարարեց վարչապետը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՐԵՓՈՒՄԸ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՇԱՐՈՒԹԱՅԱՐԿԻ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՀԱՅՏԱԳՐՈՒՄ

Հարկային օրենսդրությունը եվրամիության Հավելյալ արժեքի հարկի (ՀԱՀ) հանձնարարականներին մերձեցնելու նպատակով հարկային օրենսգրքում իրականացվեցին փոփոխություններ եւ ՀԱՀ-ի կարգավորման դրույթները ձեւակերպվեցին բացարձակապես այլ խմբագրությամբ:



Բարեփոխման արդյունքում պահպանվում են բոլոր այն ընթացակարգերը, որոնք մինչ այդ գործում էին ՀԱՀ-ի կապակցությամբ: Ընդլայնվում է նաեւ սպասարկումների ցանկը, որոնց մատուցումը չի հարկադրվում Վրաստանում եւ նրա սահմաններից դուրս: Ընդլայնվում են ճշգրտվում են ապրանքի փոխադրման հետ կապված ՀԱՀ-ի հաշվարկումից ազատված գործողությունները, բժշկական ու կրթական գործունեության հետ միասին հարկադրումից ազատվում են դրանց հետ անմիջականորեն կապված եւ օժանդակ գործողությունները կամ ապրանքների մատուցումը: Չի հարկադրվում կազմակերպության կողմից նպաստների գրավման նպատակով բժշկական կրթական եւ առանձին հատուկ բնույթի գործունեությունը, չի հարկադրվում ապրանքի նմուշի կամ փոքրածեք նմուշառությունը, դուրսացվում է ապրանքի անվարձահատույց մատուցման ՀԱՀ-ով հարկադրման հետ

Վրաստանի հարկային օրենսգրքում իրականացված փոփոխությունների (ՎՀՕ 309 հոդվածի 118-120 մասերի հավելում) հիման վրա «Հարկային վարչարարության մասին» Վրաստանի ֆինանսների նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 996 հրամանագրով, սահմանվեցին այն արտադրությունների կողմից դիվիդենդների բաշխման շահութահարկի հարկադրման եւ շահութահարկի գումարի վիճարկման/վերադարձման կարգերը, որով 2017 թվականի հունվարի 1-ից հետո ընդունման/կորստի կոմերցիոն բանկի, վարկային միության, ապահովագրական ընկերության, միկրոֆինանսական կազմակերպության եւ վարկ հանձնող սուբյեկտների կարգավիճակը:



Վերոնշյալ փոփոխությունների հաշվառմամբ, շահութահարկի ամենամյա հայտագիրը հնարավոր կլինի լրացնել ընթացիկ տարվա հոկտեմբերի հաշվարկային ժամանակահատվածից:

«Հարկային վարչարարության մասին» Վրաստանի ֆինանսների նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 996 հրամանագրով իրականացվում է եւս մեկ փոփոխություն. Հարկատու իրավասու է նշված հարկային ստուգման արդյունքում գրանցված շահութահարկի գումարը, որը ՎՀՕ 98² հոդվածի համաձայն ենթակա է հաշվարկման: Վերոնշյալ փոփոխությունը ուժի մեջ է մտել ընթացիկ տարվա նույնների 1-ից: Մանրամասն տեղեկատվությունը. <https://matsne.gov.ge/ka/document/view/5010205?publication=0> <https://matsne.gov.ge/ka/document/view/5024306?publication=0>

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԵԼՆԵԼՈՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ՝ ՊԵՏՔ Է ԳՏՆԵՆՔ ԱՐԱԳ ԵԼՔ. ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՉՈՒՆԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Կեց, որպեսզի նրանք լինեին Վրաստանի օրենսդրական մարմնում, սա պատասխանատվության մանդատ էր. հայտարարեց Գիորգի Գախարիան:

Վարչապետի համոզմամբ, երկխոսությունն այլընտրանք չունի, եւ որ դա յուրաքանչյուր քաղաքական ուժի պատասխանատվությունն է, ու որ երկրի ճակատագիրը չպետք է որոշվի փողոցում:

- Բոլոր ուժերը՝ ինչպես իշխող թիւնը, այնպես էլ՝ ընդդիմությունը,

պետք է լավ գիտակցեն, որ Վրաստանի քաղաքացու մանդատը, առաջին հերթին կայանում է նրանում, որ մենք միասին հող տանենք երկրի մասին, եւ երկխոսությունն ինքնին այլընտրանք չունի: Դա յուրաքանչյուր քաղաքական ուժի պատասխանատվությունն է, եւ դա պատասխանատվությունն է այն մարտահրավերներով լի դարաշրջանում, երբ բոլորը պետք է համատեղ դիմակայեն համավարակը, արդյունավետ շարունակեն երկրի հետագա շարժը դեպի եվրոպա՝ դեպի իր եվրատլանտյան

ապագան: Մեր քաղաքացիները մեզ ասացին, որ տեղը, որտեղ պետք է որոշվի երկրի ճակատագիրը, ժողովրդավարականորեն ընտրված խորհրդարանն է, ոչ թե փողոցը, եւ ես համոզված եմ, որ քաղաքական սպեկտրը դա շատ լավ հասկանում է: Համոզված եմ, որ բոլորը կունենան բավարար պատասխանատվություն՝ մեր քաղաքացիների այս ուղեծր ճիշտ ընկալելու եւ այն ճիշտ վերափոխելու կոնկրետ քայլերի, հայտարարեց Գիորգի Գախարիան:

ԱՐՉԻԼ ԹԱՍԿԱՎԱՅԵ. «10-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՄԻԱԿՈՒՍԱԿՅԱՎԱՆ ՉԻ ԼԻՆԻ, ՈՐՈՎՇԵՏԵՎ...»

Վրաստանի 9-րդ գումարման խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, մեկնաբանելով խորհրդարանական մանդատների իր երկրորդ փուլին մասնակցելուց հրաժարվելու մասին միացյալ ընդդիմության կազմում ներառված կուսակցությունների որոշումը, հայտարարեց, որ նման հայտարարություններով վերջիններս

է՛լ ավելի են թուլացնում իրենց դիրքերը, հեղինակազրկվում թեկուզ հենց իրենց աջակցություն ցուցաբերած ընտրողների մոտ:

Խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն վստահ է, որ 10-րդ գումարման խորհրդարանը միակուսակցական չի լինի, քանի որ «Երազանքից» բացի, խորհրդարանական մանդատ է ստանում եւս ութ կուսակցություն:



Նրա խոսքով, այն քաղաքական խմբերը, որոնք կշարունակեն անտեսել ընտրողներին եւ հանրային կարծիքը, կվճարեն քաղաքական գին:

ՀԱՎԱՍԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԻՅ

Ընդդիմության մեջ խառնաշփոթություն կա, նրանք ամբողջ օրը հակասական հայտարարություններ են անում: Նույնիսկ Գրիգոր Վաչաձեի հայտարարությունները հակասում էին միմյանց, այս մասին հայտարարել է «Վրացական երազանքի» առաջնորդներից Մամուկա Մդինարաձեն:

- Եթե ընդդիմության ուղեծրը կառուցողականությունն է, ապա այդ մասին խոսում ենք նաեւ մենք: Կարծում եմ՝ ոչ ոք չպետք է խնդիրներ ունենա կառուցողականության հետ: Ընդհանրապես, ոչ ոք դեմ չէ կառուցողականությանը, քանի որ դա առաջին հերթին մեր արտասահմանցի գործընկերների դիրքորոշումն է:

«Ազգային շարժման» մեջ շատ հուզումներ են տեսելու, եւ անկախ նրանից, այն կմտնի՝ խորհրդարան, թե՛ ոչ, մենք կարող ենք գտնել շատ դրական ու շատ բացասական կողմեր: «Ազգային շարժումը»

զբաղված է զարգացման դինամիկան խաթարելու փորձով: Մենք նրանցից որեւէ բովանդակային բանավեճ չենք տեսել, միայն արմատական միջոցներ են ձեռնարկվել խորհրդարանում: Մեզ միշտ առաջարկվում է անկարգությունների սցենար: Որքան շատ կուսակցություններ լինեն խորհրդարանում, այնքան լավ, - հայտարարեց Մամուկա Մդինարաձեն:

Հիշեցնենք, որ «Ազգային շարժման» նախագահ Գրիգոր Վաչաձեն հայտարարություն էր տարածել՝ կոչ անելով կողմերին գործընթացը տեղափոխել բանակցությունների սեղան եւ բոլոր ուժերին պետությունը դուրս բերել խորը ճգնաժամից: Ավելի ուշ, Գրիգոր Վաչաձեն բացատրություն է տարածել իր հայտարարության վերաբերյալ, որ եթե բանակցությունները չունենան հաջող ավարտ, չեն մասնակցի երկրորդ փուլին եւ ոչ էլ խորհրդարան կմտնեն:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԴԱՏՐԱՍ Է ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը արձագանքում է նույնների 8-ին ԿԸՀ-ի շեմքի մոտ տեղի ունեցած իրադարձություններին:



Ինչպես հայտարարում են ԿԸՀ-ում, նրանք գտնում են, որ սա ընտրական վարչակազմի վրա ճնշման եւ ազդեցության անընդունելի ձեւ է, որը մի քանի օր է՝ ինչ շարունակվում է, ընտրական վարչակազմի հանդեպ, ներառյալ շրջանային ընտրական հանձնաժողովներում:

«Հարկ է նշել, որ 2020 թվականի ընտրական գործընթացն ավարտված չէ, դեռ հայտնի են միայն նախնական արդյունքները: Այս փուլում տարբեր իրավական գործընթացներ են ընթանում, ինչպես տարածքային ընտրական հանձնաժողովներում, այնպես էլ՝ ընդհանուր դատարաններում: Ճշտվել են ամփոփ արձանագրությունների մի մասը, տարբեր տեղանասերում ընթանում է ձայների վերահաշվարկ, ու գործընթացները դեռ շարունակվում են, եւ վերջնական պաշտոնական արդյունքը չի հաստատվել: Սակայն, ցավոք, որոշակի քաղաքական կուսակցությունների կողմից շարունակվող իրավական գործընթացներին խոչընդոտելը ակնհայտ է, հարցեր է առաջացնում, իրենից ներկայացնում է անկախ ինստիտուտի կամխանութով վարկաբեկում է եւ չի տեղավորվում այն իրավական ձեւերի մեջ, որոնք կարելի է գործընթացների նկատմամբ վստահության տեսանկյունից:

Ցանկանում ենք նշել, որ ընտրական վարչակազմն անկախ ինստիտուտ է, որը ներկայացնում են բավականին մեծ թվով քաղաքացիներ, եւ այս ինստիտուտը ստեղծվել ու գործում է ժողովրդի ծառայության համար: Ընտրական վարչակազմը հիմնականում ծառայում է ժողովրդին, եւ տարիներ շարունակ այս ինստիտուտը ներկայացնում են մարդիկ, որոնք ջանքերով է այն միջազգային ճանաչումը, որը տարածաշրջանում առանձնացնում է այս վարչակազմը»,- ասված է ԿԸՀ-ի հայտարարության մեջ:

Նրանց խոսքով, «ընտրական վարչակազմը շարունակում է աշխատել, ընտրություններին երկրորդ փուլում ժողովրդին ծառայելու համար, որպեսզի ավարտվեն 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների բոլոր գործընթացներն այնպես, ինչպես նախատեսված է երկրի սահմանադրությամբ եւ օրենքով»:

«Հետևաբար, մենք կոչ ենք անում ներգրավված կողմերին եւ բոլոր շահագրգիռ անձանց, աջակցել Վրաստանի քաղաքացիների ընտրական իրավունքի իրացմանը:

Եվ վերջում, ընտրական վարչակազմը պատրաստ է ցանկացած խաղաղ ձեւաչափում, տարբեր ներգրավված կողմերի մասնակցությամբ, խոսել ընտրական հարցերի հետ կապված ցանկացած թեմայով: Մենք դիմում ենք միջազգային գործընկերներին ու տեղական հասարակական կազմակերպություններին, երկխոսությանը նպաստելու համար ինչը կարելի է երկրում քաղաքացիական համաձայնության համար»,- ասված է ԿԸՀ-ի հայտարարության մեջ:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ, ՍԱԿԱՅՆ ԿՐՔԵՐԸ ՉԵՆ ՀԱՆԴԱՐՏՎՈՒՄ

ՀԱՍՄԱՍՆԱԿԱՆՈՎ 61 ՄԱՆԴԱՏԸ՝ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻՆ», 59-Ը՝ ՄԻԱՑՅԱԼ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 31-ին Վրաստանում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ:

Համամասնական ընտրահամակարգով ընտրությունների արդյունքներով, տասներորդ գումարման խորհրդարանում մանդատներ սկսեցին 9 քաղաքական սուբյեկտներ: Մասնավորապես, «Վրացական երազանքը» իր ակտիվում գրանցեց ընտրողների քվեների 48,23 տոկոսը, «Միասնական ազգային շարժումը»՝ 27,17 տոկոսը, «Եվրոպական Վրաստանը»՝ 3,79 տոկոսը, «Լեյզն»՝ 3,15 տոկոսը, «Հայրենասերների այլանս»՝ 3,14 տոկոսը, «Ռազմավարությունը՝ շինարար»՝ 3,15 տոկոսը, «Գիրչին»՝ 2,89 տոկոսը, «Ալիկո Էլիսաշվիլի-քաղաքացիներ»՝ 1,32 տոկոսը եւ «Լեյբորիստական կուսակցություն»՝ 1 տոկոսը:

Ինչ վերաբերում է մեծամասնական ընտրահամակարգին, ապա հոկտեմբերի 31-ին 30 ընտրատարածքներից հաթորը բացահայտվեց միայն 14-ում, ընդ որում, հաղթողները ներկայացնում էին «Վրացական երազանքը»: Մյուս 16 ընտրատարածքներում, այդ թվում՝ Թբիլիսիի

բոլոր ութ ընտրատարածքներում նույնների 21-ին անցկացվելու է ընտրությունների երկրորդ փուլը:

Թեւեւ, անկախ երկրորդ փուլի արդյունքներից, այսօր արդեն կարելի է ասել, որ «Վրացական երազանքը» նորընտիր խորհրդարանում կունենա մեծամասնություն եւ իրավասու է ինքնուրույն, առանց որեւէ քաղաքական այլ ուժի ներգրավմամբ, կարող է կազմել միակուսակցական կառավարություն:

Ընտրությունների արդյունքներով, խորհրդարանական մանդատների արժանացած եւ խորհրդարանից դուրս մնացած ընդդիմադիր կուսակցությունները հայտարարեցին ընտրությունների արդյունքների չեղարկման ու նոր ընտրությունների անցկացման պահանջով բողոքի ցույցեր անցկացնելու մասին: Ընտրությունների հաջորդող օրերին, իրոք, բողոքի ցույցեր անցկացվեցին Թբիլիսիում, Ռուսթավելու պողոտայի վրա, խորհրդարանի շենքի մոտ, ինչպես

նաեւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի շինության մոտ, թեւեւ այդ վերջին հավաքն այնքան էլ խաղաղ բնույթ չկրեց, ընդհարումներ տեղի ունեցան ցուցարարների եւ իրավապահների միջեւ, ցույցի ցրման համար օգտագործվեցին ջրցան մեքենաներ, անցկացվեցին ձեռքարկություններ:

Ներկա դրությամբ, Վրաստանում հավատարմագրված դիվանագետների միջնորդությամբ քայլեր են ձեռնարկվում կառավարող կուսակցության եւ միացյալ ընդդիմության միջեւ համաձայնության հաստատման ուղղությամբ:

Ցավոք, մեզանում արդեն սովորական երեւոյթ է դարձել, որ յուրաքանչյուր ընտրությունից հետո, պարտվող կողմն ընտրությունները համարում է կեղծված եւ պահանջում արդյունքների վերանայում: Անկեղծ ասած, առանձին ընտրահանձնաժողովների անդամների ցածր իրավասությունն էր որոշակի հրահրեց նման պահանջի ներկայացմանը: Խոսքը վերաբերում է առանձին տեղանասերում քվեարկության մասնակիցների ստորագրությունների եւ քվեաթերթիկների թվի նկատելի տարբերությանը,

թեպետ ԿԸՀ պատրաստակամություն հայտնեց վերահաշվարկել այդ տեղանասերի ձայները (ինչպես պարզվեց, տեղի է ունեցել զուտ տեխնիկական սխալ): Սակայն, տվյալ պարագայում, ընտրությունների կեղծման մասին պնդումներն այնքան էլ համոզիչ չեն, եթե հաշվի առնենք, որ մինչեւ ընտրություններ անցկացված հարցումների (այդ թվում՝ նաեւ ընդդիմության պատվերով կատարված հաշվումների) արդյունքների միջին թվաբանականը, որքան էլ տարօրինակ լինի, գրեթե համընկնում է ԿԸՀ-ի հրապարակած արդյունքներին (մի քանի տասնորդական տոկոսի տարբերությամբ):

Եվ վերջում, իրաժարվելով մանդատներից, փորձում է լեգիտիմությունից զրկել նորընտիր խորհրդարանը, առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ նոր խորհրդարանի աշխատանքի մեկնարկի համար բավական է պատգամավորների ցուցակային կազմի կեսի առկայությունը, ինչն էլ «Վրացական երազանքը» արդեն ունի:

Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ